ԹԵՄԱ 2 ԱՆՏԻԿ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ՀԻՆ ՀՈՒՆԱՍՏԱՆ

§ 30. ՀՌՈՄԵԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԸ

1

Կապիտոլիական դիցարանը այսպիսին էր.

Յուպիտեր – աստվածների հայրը, ամպրոպի և կայծակի աստվածը,

Յունոնա – Յուպիտերի կինը, մայրության աստվածուհին,

Նեպտուն – ծովերի և օվկիանոսների աստվածը,

Պլուտոն – երկրի ընդերքի, ստորգետնյա թագավորության աստվածը,

Վեստա – ընտանեկան օջախի հովանավոր աստվածուհին,

Մարս – պատերազմի աստվածը,

Վեներա – սիրո և գեղեցկության աստվածուհին,

Վուլկան – հրաբխի, կրակի և դարբնության աստվածը,

Դիանա – լուսնի, անտառների, որսորդության աստվածուհի,

Միներվա – քաջության և իմաստության աստվածուհի,

Մերկուրի – աստվածների պատգամաբերը, առևտրի հովանավորը,

Ցերերա – բերքատվության, պտղաբերության աստվածուհին:

Հռոմեական դիցարանում կարևոր նշանակություն ուներ ցանքսի և հողագործության աստված ***Սատուռնի*** պաշտամունքը, որի տոնը նշում էին դեկտեմբերի 25-ին՝ բոլոր գյուղատնտեսական աշխատանքներն ավարտելուց հետո: Պաշտում էին նաև ամեն ինչի սկիզբը և ավարտը հովանավորող երկդեմ ***Յանուսին:*** Յուրաքանչյուր կարևոր գործ սկսելիս՝ պատերազմ, մեծ շինարարություն և այլն, Յանուսի տաճարի դռները բացում էին և միայն գործն ավարտելուց հետո էին դրանք փակում:

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՈՒՄԸ

I դարի սկզբին Պաղեստինում առաջացավ մի նոր կրոն՝ ***Քրիստոնեությունը:*** Նոր կրոնը շատ հետևորդներ ունեցավ հատկապես ստրուկների և չքավորների շրջանում: II–III դարերում քրիստոնեությունը լայնորեն տարածվեց ողջ Հռոմեական կայսրությունում:

Քրիստոնեություն սկսեցին ընդունել նաև միջին և ունևոր խավի մարդիկ: Սակայն քրիստոնեությունը միանգամից պետական կրոն չդարձավ:

325 թ. Նիկեա քաղաքում Կոնստանդին կայսրը հրավիրեց կայսրության քրիստոնեական բոլոր համայնքների պատվիրակների ***I տիեզերաժողովը:*** Մշակվեցին քրիստոնեական եկեղեցու ծիսակարգի ընդհանուր կանոնները, խմբագրվեց Աստվածաշունչը: ***Այդպես քրիստոնեական կրոնը հարմարեցվեց պետության շահերին ծառայելու համար:***

Միայն IV դ. վերջին քրիստոնեությունը վերածվեց Հռոմեական կայսրության պետական կրոնի: Հեթանոսական բոլոր կրոններն արգելվեցին, իսկ հեթանոսական տաճարները վերածվեցին եկեղեցիների:

2

Հռոմի բոլոր ազատ քաղաքացիները քիչ թե շատ կրթված էին: Հնագույն ժամանակներում երեխաներին գրագիտություն սովորեցնում էր ընտանիքի նահապետը: Նա պատմում էր նաև նախնիների, անցյալի հերոսների քաջագործությունների մասին, սովորեցնում էր լինել անվախ, նվիրված և հայրենասեր:

Հռոմում ուսումը վճարովի էր: Ունևոր ընտանիքների 7–12 տարեկան բոլոր երեխաները հաճախում էին ***տարրական դպրոց:*** Այնտեղ սովորում էին գրել, կարդալ և հաշվել:

12–16 տարեկանում տղաները հաճախում էին ***քերականական դպրոց:*** Այնտեղ, ***լատիներեն և հունարեն*** քերականությունից և գրականությունից բացի, սովորում էին նաև մաթեմատիկա, աստղագիտություն, երկրաչափություն և այլն: Տղաների համար կարևոր էր նաև ֆիզիկական դաստիարակությունը, որովհետև պետք է ծառայեին բանակում: Աղջիկները կրթությունը շարունակում էին ստանալ տանը՝ պեդագոգի օգնությամբ:

16 տարեկանից տղաները համարվում էին չափահաս: Նրանք սկսում էին հատուկ ուսուցիչների մոտ սովորել ***հռետորություն և իրավագիտություն:*** Լավ ճառախոսելը և օրենքների իմացությունը կարևոր էին պետական պաշտոնի ընտրվելու, դատարանում ելույթ ունենալու, զինվորներին ղեկավարելու համար: Ունևոր տոհմերի երիտասարդները մեկնում էին Աթենք, Հռոդոս կամ Ալեքսանդրիա՝ բարձրագույն կրթություն ստանալու հունական փիլիսոփայական դպրոցներում:

Նշանավոր շատ հռոմեացիներ եղել են փայլուն հռետորներ և իրավաբաններ. ***Գայոս և Տիբերիոս Գրակքոսները, Հուլիոս***

Կեսարը, Կիկերոնը:

Գյուղատնտեսության վերաբերյալ գիտական աշխատություններ են գրել ***Կատոն Ավագը և Վառոնը:*** Նրանց խորհուրդների հիման վրա իրենց տնտեսությունը վարում էին շատ նոբիլներ: Ճարտարապետության վերաբերյալ կարևոր աշխատությունների հեղինակ էին ***Վիտրուվիոսը*** և ***Ֆրոնտինը:***

Պլինիոս Ավագի աշխատությունները կարևոր տեղեկություններ են հայտնում Հռոմեական կայսրության հարևան երկրների բնական հարստությունների, պատմության, բարքերի ու սովորույթների մասին: Հռոմի պատմության վերաբերյալ աշխատություններ են գրել ***Տիտոս Լիվիոսը, Տակիտոսը, Սվետոնիոսը*** և ուրիշներ:

3

Դրանք կամարաձև, երբեմն 2-3-հարկանի կառույցներ էին, որոնց վրայով գցված կավե խողովակներով խմելու ջուրը ինքնահոսով հասնում էր Հռոմ: Արդեն քաղաքում խողովակներն անցնում էին գետնի տակով և ցայտում աղբյուրների ու շատրվանների ձևով, որտեղից էլ բնակիչները խմելու ջուր էին վերցնում: Հռոմում կառուցվել էր նաև ստորգետնյա կոյուղի, որը թափվում էր Տիբր գետը:



ԱՔՎԵԴՈՒԿԻ ՍԽԵՄԱՆ

4

Պահպանված հին հռոմեական ճանապարհ

Ճանապարհները կառուցվում էին ուղիղ գծով, որպեսզի հռոմեական բանակը արագորեն հասնի ուր պետք է: Գետերի և ձորերի վրայով կառուցվում էին կամուրջներ: Ճանապարհները հարթ էին, եզրերին սարքված էին ջրահեռացման առուներ: Ամեն հազար քայլից հետո ճանապարհին կանգնեցված սյան վրա գրված էր Հռոմի կամ մոտակա քաղաքի հեռավորությունը: Հռոմի կենտրոնական ֆորումում դրված ոսկեզօծ գագաթով սյունը համարվում էր Հռոմից դուրս եկող բոլոր ճանապարհների սկիզբը: Հռոմեացիները կատակով ասում էին, որ ***«բոլոր ճանապարհները տանում են Հռոմ»:***

5

Եթե թատրոնը նման է կիսած շրջանագծի, ապա ամֆիթատրոնն ամբողջական շրջանն էր, բայց փոքր-ինչ ձվաձև: Կենտրոնում ձվաձև հրապարակն էր, իսկ նստարանները շրջանաձև բարձրանում էին ներքևից վերև: Հռոմեական ամֆիթատրոնների օրինակով են կառուցվում ներկայիս ***սպորտային ու ֆուտբոլային մարզադաշտերը:***

Երբ գլադիատորներից մեկը պարտվում էր, հաղթողը սպասում էր հանդիսատեսի վճռին: Եթե մեծամասնությունը ձեռքն առաջ էր մեկնում բութ մատը դեպի ներքև, ուրեմն պարտվածին սպանում էին: Եթե պարտվողը քաջաբար կռվել էր, բութը պարզում էին դեպի վեր, այսինքն՝ նրան կյանք էին շնորհում:

6

Տրայանոսի հուշասյունը



Հուշասյան քանդակները

Պանթեոնի տեսքը դրսից

Տրայանոս կայսրը դակերի դեմ իր տարած հաղթանակի պատվին Հռոմում կառուցեց գեղեցիկ շենքերով շրջապատված նոր հրապարակ, որի կենտրոնում կանգնեցված էր 38 մետր բարձրությամբ նրա հուշակոթողը: Ներքևից վերև այն զարդարված էր բարձրաքանդակներով:



Պանթեոնի տեսքը ներսից

Խճանկար Պոմպեյի պեղումներից. «Գավգամելայի ճակատամարտը»

Հռոմեական բաղնիքի հատակի խճանկար

Գառնիի բաղնիքի հատակի խճանկարը